ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ղազախստանի Հանրապետություն (Աստանա)
գործուղման արդյունքների մասին
2017 թվականի օգոստոսի 23 - 25-ը

1. **Անուն, ազգանունը՝**

Էմիլ Տարասյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ղազախստանի Հանրապետություն (Աստանա), 2017 թվականի օգոստոսի 23-25-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Աստանա քաղաքում անցկացվող «Եվրասիական շաբաթ» ցուցահանդեսային երկրորդ համաժողովին մասնակցություն:

ԵԱՏՄ երկրների պետական կառավարման մարմինների, գործնական և փորձագիտական շրջանակների, երրորդ երկրների ներկայացուցիչների հետ տնտեսական զարգացման ակտուալ հարցերի, նորարարական արդյունաբերության զարգացման ռազմավարական ուղղությունների նախանշում, ինչպես նաև ցուցահանդեսային մասում Հայաստանի արդյունաբերության ներկայացում:

Գործնական ծրագրի շրջանակներում մասնակցություն եմ ունեցել երկու կլոր սեղանների (հանդիսանալով որպես խոսնակ) և պանելային քննարկումների, որտեղ մտքեր են փոխանակվել ԵԱՏՄ շրջանակներում վարվող ինովացիոն քաղաքականության, էլեկտրոնային տնտեսության ներդրման, ինչպես նաև ԵԱՏՄ և երրորդ երկրների միջև ինտեգրացիոն գործընթացների հնարավորությունների մասին:

Ցուցահանդեսի շրջանակներում հայկական կողմը ներկայացել է առաջատար ընկերությունների խմբով՝ ցուցադրելով վերջիններիս ձեռքբերումները դեղագործության (Թուֆենկչի, Այ պլաստ, Բյթի փրոդակտս), թեթև արդյունաբերության (Մոսինի), ՏՏ և ճշգրիտ ճարտարագիտության (Էլբատ), սննդի արդյունաբերության ոլորտներում (Շառոյան-Սարյան):

6. **Քննարկված թեմաները**

- Համագործակցության վեկտորներ:
- Էլեկտրոնային օրակարգի զարգացում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Հայկական պատվիրակության կազմում մասնակցել եմ լիագումար նիստին:

Մասնակցել եմ «ԵԱՏՄ – երրորդ երկրներ՝ Համագործակցության վեկտորներ» կլոր սեղանին, որտեղ ելույթ եմ ունեցել «Համագործակցություն երրորդ երկրների հետ՝ Հայաստանի փորձը» թեմայով:

Մասնակցել եմ «Եվրասիական տնտեսական միության թվային օրակարգ» կլոր սեղանին, որտեղ ելույթ եմ ունեցել՝ «Հայաստանի թվային օրակարգ» թեմայով:

Մասնակցել եմ համաժողովի ցուցահանդեսային մասին, ինչպես նաև հանդիպումներ եմ ունեցել ԵԱՏՄ անդամ պետությունների և երրորդ երկրների ներկայացուցիչների հետ, մասնավորապես՝ հանդիպել և քննարկում եմ ունեցել Microsoft ընկերության ներկայացուցչի հետ:

Նույն օրը կազմակերպվել է հանդիպում Համաշխարհային բանկի պատասխանատու աշխատակիցների հետ, որտեղ ներկայացրել եմ նշված բնագավառում Հայաստանում իրականացված աշխատանքները և քննարկել Հայաստանում էլեկտրոնային տնտեսության ներդրման հարցում Համաշխարհային բանկի ֆինանսական և տեխնիկական աջակցության հնարավորությունների մասին:

Այցելել եմ «Աստանա-էքսպո» ցուցահանդես, որտեղ ներկայացված են նաև Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտների առաջավոր ընկերություններ և կազմակերպություններ:

8. **Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Արդյունքում.

Կազմվել է «Եվրասիական տնտեսական միության թվային օրակարգ» և «ԵԱՏՄ – երրորդ երկրներ՝ Համագործակցության վեկտորներ» կլոր սեղանների արձանագրություններ և ընդունվել է հռչակագիր, որի նպատակն է ԵԱՏՄ թվային տարածքի զարգացումը, ԵԱՏՄ թվային շուկայի կազմակերպումը, թվային տարածքում տվյալների պաշտպանությունը և այլն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները և ակնկալվող արդյունքները

Արդյունքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ.

– Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանի թվային օրակարգի ներդրման հարցում Համաշխարհային բանկի կողմից ֆինանսական և տեխնիկական աջակցության հնարավորությունների ուսումնասիրման վերաբերյալ:

– «ԱյՊլաստ», «Բյութի Փրոդաքթս» և «Թուֆենկչի գրուպ» ընկերությունները գրանցել են իրենց արտադրանքը Ղազախստանում և պայմանագրեր կնքել արտադրանքի արտահանման ուղղությամբ: Մի շարք բանակցություններ ընթացքի մեջ են:

– Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ «Եվրասիական շաբաթ» երրորդ համաժողովը կանցկացվի 2018 թվականին Երևանում:

10. Գործուղվողը

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ՝ Էմիլ Տարասյան

11. Ստորագրություն, ամսաթիվ

11.09.2017թ.